ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

* * *

Հոկտեմբերի 8-ին, հինգշաբթի.—Այսօր Բեյրութ է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

* * *

Հոկտեմբերի 10-ին, շաբաթ.—Տօն Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի քերթողի, Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն.

Այսօր թարգմանչաց տոնի կապակցությամբ Օշականի ուխտի են մեկնում վանքի միաբանությունը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու հայ մշակույթի մեծ երախտավոր ս. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին:

Օրվա մեծ տոնի առիթով, Օշականի ս. Սեսրոպի անվան եկեղեցում պատարագում է տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը և քարոզում թարգմանչաց վարդապետների մշակութային գործունեության հոգևոր, լուսավորական և հայրենասիրական նշանակության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ տ. Հուսիկ եպիսկոպոսի նախագահությամբ հայ մշակույթի բոլոր վատակավորների հիշատակին:

Այնուհետև Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցում տեղի է ունենում թարգմանչաց հիշատակին նվիրված հանդիսություն, որտեղ ողջույնի խոսքով հանդես է գալիս տ. Հուսիկ եպիսկոպոսը: Ապա բարիգալստյան խոսք է ասում դպրոցի տնօրեն Սեթ Ադիբեկյանը: Դպրոցի աշակերտներից ոմանք ապրումով արտասանում են ս. Մեսրոպ Մաշտոցին նվիրված հայրենաշունչ բերթվածներ:

Հայ մշակույթին և թարգմանչաց հիշատակին նվիրված հանդեսին արտի խոսք են ասում նաև տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը և պրոֆ. Հ. Ճ. Սիրունին:

Թարգմանչաց հիշատակին նվիրված սույն հանդեսը ավարտվում է խանդավառ մթնոլորտում:

* * *

Հոկտեմբերի 11-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Երանի սգաւորաց, զի նոքա միխթարեսցին» բնաբանով:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը մասնավորաբար հիշատակում է 1915 և 1920 թվականներին Մարաշում ձեռնատակված

հայ ժողովրդի այն զավակների մասին, ովքոնք հավատարիմ հայոց պատմության հերոսական ավանդույթներին, ծանր և դրժբախտ օրերին անձնուրաց պայքարով հանձրն առան հահատակությունը ու մեռան «վասն Ցիսուսի, վասն հայրենեաց» անհավասար մարտերում:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ Մարաշի բոլոր նահատակների հոգիների լուսավորության համար:

* * *

Հոկտեմբերի 17-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռից Լենինական է մեկնում տ. Ղևոնդ արքեպ. Չեպեյանը՝ Ղազարոս սրկ. Պյուրեղյանի ուղեկցությամբ:

Հոկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Լենինականի Յոթ վերք եկեղեցում սրբազան հայրը պատարագում է և հովոր պատշգամի քարոզում:

Այնուհետև տ. Ղևոնդ արքեպիսկոպոսը և Ղազարոս սարկավագը մեկնում են Կիրովական, որտեղ սրբազանը հանդիպում և զրույց է ունենում տեղի հոգևորականների հետ, որից հետո վերադառնում են Մայր Աթոռ:

* * *

Հոկտեմբերի 18-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարությանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Ավագ սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ Հանգի հերոսամարտի 50-ամյակի առիթով նահատակների հիշատակին:

Ս. պատարագին ներկա էին բազմաթիվ հանգիներ սփյուռքից և մայր հայրենիքից:

* * *

Հոկտեմբերի 19-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռոստովի հայոց հոգևոր հովիվ տ. Գրիգորիս աբեղա Բունիաթյանը:

* * *

Հոկտեմբերի 24-ին, շաբաթ.—Այսօր Երուսաղեմից Մայր Աթոռ է ժամանում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, որը սեպտեմբերի 11-ին մեկնել էր Երուսաղեմ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ՝ զբաղվելու տ. Սերովբե, տ. Թորգոմ, տ. Նորայր, տ. Շահե և տ. Տիրայր սրբազանների հետ Մաշտոցի կրճատման հարցով, 1969 թվականի սեպտեմբերին Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսական ժողովի որոշման համաձայն:

* * *

Հոկտեմբերի 24-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում նաև Թեհրանի հայոց թեմական խորհրդի ատենապետ Վահրամ Դավիթիսյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

* * *

Հոկտեմբերի 25-ին, կիրակի.—Է կիրակի զկնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հոկտեմբերի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, շուրջ մեկուկես ամիս ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող վաստակավոր մտավորական պրոֆ. Հ. Ճ. Սիրունին, հրաժեշտ առնելով, վերադառնում է Բուխարեստ: Պրոֆեսորը Մայր Աթոռում գտնված օրերին մի շարք դասախոսություններ է կարդացել հոգևոր ճեմարանի ուսանողությանը, զրույցներ է ունեցել Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի դասախոսների հետ:

* * *

Հոկտեմբերի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր Բելգրադից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում սրբազան հորը դիմավորում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը և Վարդան սրկ. Տեոդեքյանը: